ՀՈՒՇԱԳԻՐ

«Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի փորձի ուսումնասիրման

համագործակցության մասին

ք. Երևան «01» 07 2025թ.

ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝Քոլեջ), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, ի դեմս տնօրեն Պարույր Սանթրոսյանի և «Երեվանի N4 արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Աննա Սաղաթելյանի(ժ/պ) մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն հուշագիրը հետևյալի մասին.

1. *ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ*

Հուշագրի նպատակն է հաստատել երկկողմ համագործակցություն ուսումնական գործընթացների, ուսուցման մեթոդների, կառավարման, որակի ներքին ապահովման, որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից իրականացվող հավատարմագրման գործընթացի և այլ գործառույթների ոլորտներում բենչմարքինգի միջոցով լավագույն փորձի ուսումնասիրումն ու փոխանցումը:

2. *ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

2.1. Սույն հուշագրով համագործակցության շրջանակներում ուսումնական հաստատությունները պատրաստակամ են համագործակցել Երևանի տարածաշրջնային N1 պետական քոլեջի որակի ներքին ապահովման ենթակառուցվածքներին վերաբերող հարցերով.

- վերլուծական այցելություններ և դիտարկումներ ուսումնական հաստատությունում,

- համատեղ աշխատաժողովների, քննարկումների և սեմինարների կազմակերպում,
- որակի ներքին ապահովման և զարգացման մեխանիզմների ընտրության հարցում ուղղորդում և փորձի փոխանցում,
- կրթական ծրագրերի կառավարման ուղղորդում,
- ինքնավերլուծություն իրականացնելու փորձի ուսումնասիրություն,
- կարիքների վերհանման մեխանիզմների ուսումնասիրություն,
- բարելավման ծրագրերի մշակման և իրականացման ուղղորդում,
- լավագույն փորձի համեմատական ուսումնասիրություն և կիրառում:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցներն սույն հուշագրով ստանձնած իրենց պարտականությունները բարեխղճորեն, Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում կատարելու: Սույն հուշագիրը Կողմերի համար ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում:

4. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ: Կողմերը կարող են դադարեցնել հուշագրի գործողությունը՝ նախապես միմյանց գրավոր ծանուցելով:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն հուշագրով նախատեսված պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժերի ազդեցությամբ, որը ծագել է հուշագիրը կնքելուց հետո և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի

դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն հուշագրով պարտավորությունների կատարումը:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն հուշագրի և դրա հիման վրա Կողմերի միջև կնքվող առանձին համաձայնագրերի կատարման ընթացքում առաջացած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով:

8. ՎԵՐՋՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

Հուշագիրը չունի պարտադիր իրավաբանական ուժ, սակայն արտահայտում է Կողմերի մտադրությունը համագործակցության իրականացման վերաբերյալ:

Սույն հուշագիրը կնքված է հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից:

Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. «Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջ» ՊՈԱԿ

Հասցե՝ ք.Երևան,Թբիլիսյան խճ.3/1

Հեռ.(010)28-57-82, (010)28-56-12

Տնօրեն՝ _____ Պ.Սանթրոսյան

2. «Երևանի N 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Հասցե՝ ք.Երևան Նոր Նորքի 4-րդ զանգված, Գյուլիքեխվյան փող., 20 շենք

Հեռ.(10)63-40-70

Տնօրեն՝ _____ Ա.Սաղաթելյան (ժ/պ)